

կոկ ու սահուն է, միաւննա սիրումէ շատ խիստ կամ «թռնդ» քառեր գործ ածել, երբեմն էլ անտեղի օրինակ նա շատ է կրկնում «սոսկալի» և ալլանդակն խօսքերը. «առսկալի զառիվալրո—խօսքը քաղաքի «մի փողոցի մասին է», — առսկալի երաժիշտո», «առսկալի հեղինակո», «առսկալի օրիորդ», «կեանքը սոսկալի», «Ալլանդակութեան շնորհիւ», «ալլանդակ», բայց վսեմ», «երազները ալլանդակ», «ալլանդակ», արտակենդրոն եմ թւելձեղո», «ալլանդակապէս անդգուշ», «ալլանդակ հալեացքով», «ալլանդակապէս բարձրո», «կծուցուրան» «լալան ժպիտո», «ծորող ծալնո», «դառնո», բայց համակրելի գծադրութեամբ տիկինո, «արիներս, ինչ ես դռան վրա կանդնելո». խօսելով ուսանողական երեկովի տոմսակների մասին, հեղինակն ուզումէ ասել, որ ռուս ուսանողուհիները շատ տոմսակ են ծախել և ալդմիտքն արտալալումէ հետեւալ ոչ զեղարուեստական դարձուածքով. «ռուս ուսանողուհիները բաւական շատ բաց են թողելու և ալն. Սրանք գուցէ մանր բաներ են, բայց մերմէջ վիպական բնաւորութիւն ունեցող գրուածքները համեմատաբար աւելի շատ են տարածում և կարդացուում, ալդ պատճառով և վիպագիրներն ամեն կերպ պէտք է աշխատեն, որ մաքուր ոճ և պարզ ու ճիշտ բառեր գործ ածեն».

Հայերի մտաւոր կեանքով հետաքրքրուողներին Խորհուրդ ենք տալիս կարդալ աչման»:

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ. Առողջուհիանդ նրեխայի ու գին. 1902 Մ. Պետ.

Մեծ եռանդով աշխատող քիշկ Բուդուղեանի գրուածքները գիտական—ժողովրդական երկերի մի ամբողջ մատենադարան են կազմում. Հայ ժողովուրդը ցալիմ շատ քիչ նիւթունէր ալդ ուղղութեամբ մշակուած և մալրենի լեզուով հրատարակուած. Բուդուղեանի աշխատանքները շատ օգտակար կարող են լինել տարրական կրթութիւն ստացած չափահանների համար, որոնք ոչ միջոց և ոչ էլ կարօղութիւն ունին ալդ խնդիրներին վերաբերեալ ընդարձակ հետազոտութիւններ

կարդայու և հասկանալու Ցանկալի է ալգոլիսի գրքովիների նուն իսկ ձրի տարածումը մեր ժողովրդի մէջ. որչափ զրանք շատ կարդացուին, այնքան ևս նախապաշարումների և բնութեան երեսիթների ու զանազան հիւանդութեանց պատճառների թիւր մեկնութիւնների թիւր կապակասի և այնքան ևս ժողովրդի առողջապահական դրութիւնը կրարւոքուի ժամանակի ընթացքում:

«Ա. ու. դ ջ ու հ իւ ա ն դ ե ր ե լ ս ա լ ի ո գ ի ն ա շօշափում է մանկան ընախօսական հոգեբանութիւնը, լաջող կերպով է ժողովրդականացրած և լաւ ուղեցոյց կարող է լինել դաստիարակութեան մասին հասկացողութիւն ունեցող մալրերի համար, լիրում է, որ հեղինակն ուսումնասիրել է իւր նիւթին վերաբերեալ գրականութիւնը և ընդարձակօրէն օգտուել է Պրաւէրի լաւտնի աշխատութիւնից (Die Seele des Kindes) անմիջապէս կամ միջնորդաբար – հեղինակն աւելի լաճախ լիշտում է պրօֆ. Սիկորսկու անունը».

Գիտութիւնը ժողովրդականացնելիս մեր կարծիքով, պէտք է դրական կերպով խօսել այն խնդիրների մասին, որոնք անվիճելի ճշմարտութիւններ են համարւում և խոստալ վիճելի կամ անճիշդ գաղափարների բացատրութիւններց, Յարդելի Բուդուղեանը զերծ չէ մնացել արդ թերութիւնից. բերենք մի երկու օրինակ, Գրքուկի առաջարանում հեղինակն ասում է. «Նորածնի հոգու մէջ արդէն իսկ գտնուում են ապազալ ընդունակութիւնների բոլոր սաղմերը՝ թէն անորոշաբարու Սեր ընդդծած «բոլոր» բառը վիճելի է զարձնում խնդիրը և կարելի է ասել, նոյն իսկ սինալ նիշտ է, հոգեբանութիւնն ընդունում է ժառանգականութեան սկզբունքը, սակայն ծնուելու միջոցին մանկան հոգին զուրկ է մոտապատկերներից, որոնց ձևոք է բերում հետզետէ՝ իւր զգալարանների շնորհիւ. շատ անգամ ահա ալգոլիսի ձեռք բերուած մտապատկերներից են կազմում և առաջանում ապագալ ընդունակութիւնները».

Սի ալ տեղ (էջ 8) հեղինակն ասում է. «Լուս-աշխարհ տեսնող երեխան մտածելու կարողութիւնից գրեթէ զրկուած է. նա գաղափարներ չունի, և ոչ իսկ ունենալ կարող է».

Սեր ընդդծած «պրեթէ»-ն բոլորովին անտեղի է. թէն ա գաղափարներ (աւելի ճիշտ՝ մտապատկերներ) չունի և ուշ էլ կարող է ունենալ ուրեմն էլ բնչ սպրեթէ».

Մի երրորդ տեղ (էջ 88) պ. բժիշկը գրում է. «Խոկական առողջ մանկավարժութեւնը, աչսինքն՝ մանուկի բնութեան ուսումնասիրութեւնը, ինչ ասել կուզի, որ զժուարին, ձանձրալի ու պատասխանատու գործ է»:

«Մանկավարժութիւնը մի ամբողջ գիտութիւն է իւր որոշ ծառալով և նիւթով, որ ընդգրկում է նաև երեխայի ընաւորութեան ուսումնասիրութիւնը, ուստի և սխալ է միմիայն վերջնուով սահմանափակել այդ գիտութեան բացարձութիւնը».

Գրքովկի լեզուն ընդհանրապէս լաւ է, սակալն թերութիւններից զերծ չէ. օրինակ պ. Բուդուղեանը գործ է ածում անճիշտ բառեր, մինչդեռ ալդ գաղափարներն արտալարտող աւելի կով և ճիշտ բառեր կան մեր գրականական լեզուի մէջ. նա ասում է. «Ո ա տ ո դ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն» փոխ. դատողութիւն. «Ո գ ա ց ա կ ա ն ո ւ թ ի ւ ն» փոխ. զգալինութիւն ոք ն ո ւ թ ի ւ ն» փոխ. բնաւորութիւն.—ալդ երկու բառերը տարբեր իմաստ ունին, բնութիւն—պրիորա, բնաւորութիւն—խառաւեր. — «Ե ա ճ ո լ ա կ ա ն», «ա ն հ ա ճ ո լ ա կ ա ն» փոխ. համելի, անհամուլ, անհամելի. «Չ օ շ ա փ ա կ ա ն» փոխ. ջշափելիքի. «Չ ը ջ չ ը ջ ո ւ մ» փոխ. շրջում. խօսող ու թ ի ւ ն» փոխ. խօսելը. «Ե ր ե խ ս ն ե ր ի փ ո ր ը կ ե ր ա կ-ը ո վ կ ո ւ ե լ»: Կան գաւառական բառեր. «Մ ա ն չ ո ւ կ, «Թ է մանչ ե թ է աղջիկ տղալք», «անպաշարք ու ցիստա» «պուպոց» «քալել» «կանչ», պատահում են նաև սխալ կաղմութիւն ու նեցող նախաղասութիւններ. «Ա լսպիսի մի գիտութիւն անհրաժեշտ է ե ր ե խ ս ա լ նոգեպէս ու ֆիզիքապէս լաւ զաստիարակելու համարու. «Ա պ ա գ ա լ ի ն մեծապէս կվարձատրուես» «Մանուկը առաջին անգամ ա ն պ ա տ շ ա ճ լ ատիկութեամբ կաթը խմեցու և ալն»:

Յանկալի է, որ պ. Բուղուղեանը շարունակէ իւր գովել-  
լի ձեռնարկութիւնը առանց ալդ թերութիւնների. իսկ միջոց  
ունեցող անձինք բարի գործ արած կլինէին, եթէ հարիւրնե-  
րով գնէին ալդ էժանագին. գրքովկները և միջոց չունեցող  
շրջանների մէջ ցրուէին ձրիապէս: